



ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ

ՀԻՆ ՀԱՅ ԵՐԳԻՉՆԵՐ.

Ողբ ի վերայ մայրաքաղաքին կոստանդնուպոլսոյ՝ վասն տիրելոյն տաճկաց. ասացեալ
ի յԱթրահամ՝ ականատես վարդապետէ:

Եմն հարիւր ւերկու թուին,
դառն և ի վատ ժամանակին.

տէր բարկացաւ յոյժ վերստին,
ազգին հոռոմց յունականին:

Յարեաւ սուլթան մի աշագին,
որ Մեհմետ անուանէին:
ազգաւ նա թուն էր Օսմանին,
որդի նա Մուրատ Խոնմբարին:

Նախ փոքրագոյն բան խորհեցաւ,
որ կատարածն էր ծանրագին.
բերթ մի սկսաւ ի ծովափին,
որ էր պօղալ աղեքսանդրին:

Զոր ձեռնարկեալ շուտ կատարեաց,
ի մէկ ամառն երեք ամսին.

Հինգ մընաւ էր նա հեռի,
ի Դալաթիոյ ֆռանկ քաղաքին:

Դարձեալ գնաց ի յիւր տեղին,
ի յետրենէ իւրեան թախտին.
և զնենգութեան խորհուրդն արար,
Քիւզանդիայ մեծ քաղաքին:

Զմեռն ի բուն խոկումն առին,
հոգաց զպէտք պատերազմին.
Հրաման եհան աշխարհ ամեն,
եկայք ամենքդ զազայութիւն:

Աղուհացից երկրորդ շարթուն,
ելեալ գիմեաց վերայ քաղաքին.
անթիւ հեծեալը ժողովեաց,
եօթն հարիւր հազար էին:

Նստեալ բոլոր հիսարեցին,
ծովով ցամաք նեղացուցին.
զորքը թուրքաց բազմանային,
Քրիստոնէիցն նուազէին:

Իսկ թագաւորն Ըստամպօլայ,
անզօր մնաց ամենեւին.
աչքն ի ֆրանկ ազգըն ձգեաց,
թէ յօգնութիւն հասանէին:

Իսկ ազգն անգութ լատինական,
անգութ անգութ լատինական:

բանս անյարմար ի մէջ բերին.

աւանդութեամբ ի մեզ դարձին,
զքաղաքդ արա ի մեզ յանձիր:

Իսկ թագաւորըն կոստանդին,
հաւան եղեալ բանից նոցին.

քաղաքն յերկուս բաժանեցաւ,
կեսքն ի հոռմ կեսքն ի լատին:

Եւ յանյաջողն էտո զնոսին,
զազգն յունաց և ֆռանկին:

հիւսիսային հողմն հնչեաց,
խափանեցաւ լոտոս քամին:

Զինչ զատըրզայք և նաւք կային,
որ կուգային ի յօգնութիւն,
անյաջողակ երերալով,
ուր որ կային՝ անդ մընացին:

Իսկ խիստ սուլթանն Մեհմետիւ,
թօփ սահմանեաց մեծ ւահագին.

զոր տեսողացըն հիացեալ,
լուղքն ամեն զարմանային:

Փլոց զհինդ պուրծ քաղաքին,
հաւասարեաց գետներեսին.

վերայ ծովուն ճամրայ արար,
իբր ընդ ցամաք ընթանային:

Քարոզ կարգաց մեծ բանակին,
քաջալերեաց զամնենսին.

թէ լսեցէք ազգ մուսուրման,
մեծ աւետեաց բան մեզ պատմին:

թէ Ըստամպօլ քաղաքըն մեծ,
թախտըն լինի ձեզ և բաժին.

մարդ ւանասուն ամեն ըռզակ,
ով որ առնու՝ նըմա լիցին:

Իսկ ի յամնեանըն մայիսին,
քսան և ութ օրն էր նըմին.

և ի յաւուր երկուշարթին,
որ հոփիսիմեանց տօն կատարին:

Եերեկոյեան յառաջ եկին,
հասին ի յեղըն իսենտեկին.

զսյլատունսն քարշեցին,
զսանգիստնին պատրաստեցին:

Ի մարտ մտեալ պատերազմին,
մինչ լուսանալ յառաւօտին.

նաև կիսոցն ի նաւ մըտեալ,
ըլ ծովակողմն պատեցին:

Եւ ի ծածկել արեգական,
երեք շարաթ օր պատկերին.

հայոց մեհան ամսոյ քսանին,
ի սուրբ Գայիանեանց տօնին:

Տէր բարկացութեամբ իսկ զարթուցեալ,
ի վերայ Կոստանդնուպոլսին.

մատնեաց ըղնա ի ձեռս ատելեաց,
խիստ թշնամիք զնա տիրեցին:
Խոկ թագաւորն և զօրքն նորին
բազում ջանիւ ի մարտ մըտին.
ոչ կարացին ընդդիմանալ,
զի տէր գարծոյց զիւր օգնութիւն:
Քանզի յերկուս բաժանեցան,
միաբանել չը կարացին.
ոմակը ի հետ թագաւորին,
կէսքն ասէին կուտամք թուրբին:
Երբե զհորձանըս հեղեղաց,
տաճկունքն դիմեալ ի ներքըս մըտին.
շատ քան ի պարիսպն ի վեր ելին.
կէսքն չուտնք զիրեարս քաշին:

Յորժամ ետես այն թագաւորն,
անզօր մնացեալ ինքն ի մարտին.
Շնարեցաւ փախուստ առնուլ,
զի բարկութիւն եհաս նըմին:
Ոմն ի յազգացն ֆռանկին,
որ Փախուստն անուանէին.
առեալ զթագաւորն և զմեծամեծն,
փախուստ էառ վերայ ծովուն:

Եւ մուսուրման ազգն որ կային,
արձակեցան ի քաղաքին.
Նախ զպալատն եկեալ առին,
որ գարպան էր թագաւորին:
Անտի չուեալ յառաջ գնացին,
զիմեալ յաւագ եկեղեցին.
սուրբ Սորիայ անուանէին,
և էր աթոռ պատրիարքին:

Բազումք յարանց քրիստոնէից,
անդ գումարեալ ի մարտ մըտին.
անթիւք սրով անկանէին,
որպէս առու զարիւնս հոսին:

Խոկ խիստ սուլթանըն Մէհէմմէտ,
մըտեալ ի մեծ եկեղեցին.
յոյժ գոհութեամբ ուրախ լինէր,
և զի հասաւ յիւր ըղձալին:

Եւ զօրքն անթիւ ըդ հետ մըտին,
արձակեցան ի փողանին.
իբր ըզ գաղան մնչէին,
որ ծարաւի արեան լինին:

Զպատերազմօղսըն զոր գըտին,
զամենեսեան կոտորեցին.
այլ և զարիս և ըզկուսանսըն,
զամենեսեան անդ ըսպանին:

Եւ ըզնորահաս տըղայս նոցին,
ի մօր գրկացըն իրլեցին.
առեալ զքարի հարկանէին,

զծերսն սըրով խողխողեցին:
Այլ զադաղակ և զողը նոցին,
զալեաց զձայն և զկականին,
ոչ ոքէկարէ լեզուաւ ասել
և ոչ բանիւ մարգկան պատմել:
Զկրօնաւորաց դասն որ կային,
զոր կալետոսք անուանէին,
և ի կանանց ազգէ բազումք,
զոր կալոզրիայ կոչէին:

Կալեալ զնոսա յոյժ քարշէին,
զի կապեսից և գերեսցին.
խոկ նորա յոյժ ընդդէմ գարձեալ,
յերկիր անկեալ թաւալէին:
Բազումք կամաւ ի ծունկս անկեալ,
զպարանոցն ի սուր տային,
վկայական յօժար մահուամբ,
անգէն նորա կատարէին:

Զեկեղեցիսն Աստուածազարդ
յոյժ անողորմ կողոպտէին.
ի պատուական ի յանօթից
և շի զարդուց մերկացուցին:

Եւ սուրբ Մարտիրոսաց նըշնարսն,
զոր պատուելով անդ պահէին.
զամենեսեան յոյժ ցրուեցին,
ոտնահարեալ կոխան արին:

Զթագաւորաց՝ ըզգերեզմանսն,
որ ի մարմար՝ տապան կային,
բացեալ զնոսա՝ կողոպտեցին,
զոսկերսն որպէս՝ փոչի հոսին:

Զայն ամենայն՝ ի սրբութեանցն,
ոչ ոք հրաշ՝ ոչ յայտնեցին.
վասն բազում՝ մեզաց մերոց,
ամենեքեան՝ յոյժ լուցին:

Էղջանգակնին՝ վայր թափեցին,
զժամահարնին՝ կոտորեցին.
զնշան խաչին՝ անհետ արին,
զսուրբ խորհուրդն՝ ցրուեցին:

Առեալ զաւարմ՝ և զգերին
ի քաղաքէն՝ ի գուրս հանին.
յերեք ժամէն՝ մինչ յինն ժամն
ոշմնչ ըժողին՝ ի քաղաքին:

Եւ զմեծ իշխանն՝ յունաց ազգին,
որ կիր Լուկայ՝ անուանէին.
և զնա գըտեալ՝ ըմբոնեցին,
բերին յառաջ՝ չար սուլթանին:

Եւ յոյժ սիրով զնա մեծարեաց,
մինչ գողացաւ՝ զխորհուրդն նորին.
յետոյ սըրով ետ գըլխատել,
զերկու որդիսն՝ իւր ընդ նմին:

Զինչ մըսըլման՝ ազդ որ կային,
ուրախութեամբ՝ ի խաղ մըտին.

գոհանալով՝ յոյժ ցընծային,
մեծ աւետիս՝ միմեանց տային.

Թէ զՍտամպօլն՝ յաւետենից,
զոր չէ առեալ՝ տաճկաց ազդին.

այժմ ի շետին՝ ժամանակին
աստուած երետ՝ զնա մեզ բաժին.

Իսկ քրիստոնեայ՝ ազդիքն ամէն,
մեծ տրամութեամբ՝ ի սուդ մըտին.

քանզի քաղաքն՝ ապաստանի,
մատնեալ ի ձեռն՝ այլասեային:

Քաղում ասրանք՝ աւար հանին,
արծաթ ոսկի՝ և մարդարտնին.

ակունք ազնիւ՝ և պատուական,
զոր չէ տեսեալ՝ ազդ հողածին:

Եկեղեցեաց՝ ընտիր անօմքն,
մարդարտաշար՝ և մեծագին,

արծաթապատ՝ աւետարան,
պատկեր նկար՝ վայելչագին:

ԶԱՄՏՐԱՆԱՅ՝ քաղաք լլցին,
և զՊուրսայ կըշտացւցին.

մինչ յԱնկուրիա՝ շատ ինչք բերին,
յաշխարհս ամէնըն՝ սփռնեցին:

Խիստ անհամար՝ զրեանք բերին,
տաճկունք տեսեալ՝ զարմանային.

քրիստոնեայ ազգս՝ այնչափ առին,
շատըն մընաց՝ մօտ տաճկնին:

ԱՅԼ թէ զմարդկան՝ ասեմ զզերին,
զմեծամեծացն՝ և ըզուամկին.

քահանայից՝ դասուցն անշափ,
չը կայր հաշիւ՝ ժողովըրդին:

Ռեզք և տղայք՝ երիտասարդք
կանայք բազում՝ և աղջկունք նոցին.

ընդ ամենայն՝ ոլորտս երկրի,
իրր զիոշի՝ տարածեցին:

Փոքր քաղաք՝ Ղալաթիա,
որ էր ֆոանկաց՝ իշխանութիւն.

մեծամեծացն՝ ի նաւ մըտեալ,
ի ծովակողմ՝ փախուստ առին:

Խսկ մընացեալքն՝ ի նոցանէ,
և առաջնորդք՝ զոր և կային.

Եկեալ աշիւ՝ և դողութեամբ,
սուլթանին սոտքն՝ անկանէին:

Եւ նա պատուէր՝ տուեալ նոցին,
թէ հսաղանդէր՝ իմ հրամանին:

քակէր զզարիսպն՝ քաղաքին,
և զամուր պուրճըն՝ սահամին:

ԱՅԼ և նոքա՝ ի յանձն առեալ:

զհրամանս նորա՝ կատարեցին.

զցամպակողմըն՝ քակէցին,

և հաւասար՝ հողոյն արին:

Փոխեաց զանուն՝ Ըստամպօլին,

որ ի քաղաքըն՝ թարգմանին.

ասաց իսլամ՝ պոլ կոչեսցին,

որ բազմութիւն՝ տաճկաց ասին:

Զմեծահասակըն՝ Սովիաց,

որ թարգմանի՝ իմաստութիւն.

աւագ մըզիթ արար զնա,

և Սովիաց՝ անուանեցին:

Կացոց իշխան ի քաղաքին,

էր Սուլէյման՝ անուն նորին.

այլ և բազում՝ զօրք ընդ նմին,

և գատաւոր՝ զիւր աղատին (?):

Դարձեալ հրաման՝ եհան ուժգին,

որ լըսողաց՝ է զառնութիւն.

յամէն քաղաք, տանս հոռոմոց,

որ են յիւրեանց՝ իշխանութիւն:

Ասաց մարդիկս՝ հանել աղնով,

տանել լընուլ՝ յայն քաղաքին.

մեծ վիշտ եղել՝ թուրքաց ազգին,

զոր և ողբան՝ յոյժ լալագին:

Զի հայրք յորդւոց՝ բաժանէին,

գտանք ի մարցըն՝ կու զատին.

Եղբարք յեղբօրէ՝ կու քակին,

ի հայրենեաց՝ բազումք զիրկին:

Նա ոչ միայն՝ տաճկաց ազգին,

այլ զբիստունեալքն՝ ի մէջ բերին:

ի Ի. և Է. հոկտեմբերին,

ԴԱ հայ ի յԱնկուրց բերդին,

Աստուածատուր՝ Սարել միշին,

և Սիմէօն՝ բարի փաշշին.

և Պապայի՝ որդի Այգատն,

և պարոն Գորգն Էշեմ հաճին:

Այժմ արասցուք՝ աւարտ բանիս,

քանի ասեմք՝ ցաւն յերկարին.

Ժինն Ճ. և երկու թումին,

զբուզանդիս՝ տաճկունքն առին:

ԱՅԼ մեք գոչեմք՝ յոյժ ողբալով,

և հառաջեմք՝ արտասուելով.

հոգոց հանեմք՝ կըսկըծալով,

ըզ մեծ քաղաքն՝ ափսոսալով:

Եկայք եղբարք՝ հաւատացեալք,

հայրք և ընտրեալք՝ իմ սիրեցեալք.

յարմարեսցուք՝ ողբս արտասուաց,

բանիս որ այժմ մէն՝ պատահեալ:

Կոստանդինուու՝ պոլիս գովեալ,

թագաւորաց՝ գահոյք կաղմեալ:

այժմ էր եղեր՝ դու աւերեալ,
անօրինաց՝ կոխան եղեալ,
Կոտանդինու՝ պօլիս ընտրեալ,
մայր քաղաքաց՝ դու անուանեալ.
դու թշնամեաց՝ եղեր մատնեալ,
ձեռլն նեղչաց՝ քոց քեզ տիրեալ,
Կոստանդինու՝ մեծ արքայն,
որ ի Հռոմ՝ թագաւորեալ.
և Սեղբեստրոս՝ հայրապետիւ,
նա ի Քրիստոս՝ հաւատացեալ,
Ճանապարհաւ՝ քեզ հանդիպեալ,
տեսեալ ըզքեզ՝ և յոյժ սիրեալ.
իւրն աթոռոց՝ տեղի շինեալ,
և նոր Հռոմ՝ զքեզ անուանեալ,
Մեծ Թէոդոս՝ ի քեզ բազմեալ,
Բ. որդւովք ի քեզ կացեալ.
Արկադէոս՝ Անորիոս,
և Թէոդոս՝ փոքրըն ընտրեալ,
Յուստինիանոս՝ թագաւորեալ,
յոյժ անուանի՝ մեծ կայսր եղեալ.
ըզդիրըս քո՝ նա յաւելեալ,
և զՍոփիայն՝ մեծացուցեալ,
Հանդէպ դըրան՝ եկեղեցւոյն,
յոյժ բարձրագոյն՝ արձան կանգնեալ.
և պլղննձոյ՝ ձիաւորեալ,
զինքն ի վերայ՝ օրինակեալ,
Հեթանոսաց՝ ի քեզ մըտեալ,
և ըզտաճար՝ քո սուրբ պլղնձեալ.
մըրդապահաց՝ խուղ արարեալ,
և զդիկունս՝ թռչնոց արկեալ,
Շուրջ քեզ զարիւնս՝ նոցա հեղեալ,
և է ոչ ոք՝ զնոսա թաղեալ.
նախատ դրացեաց՝ զքեզ արարեալ,
շըրջակայիցըն՝ ծաղր եղեալ,
Զերիտասարդու՝ քո հուր կերեալ,
և կուսանացդ՝ ոչ ոք սգացեալ.
քահանայք քո՝ ի սուր անկեալ,
զայրիսըն՝ քո՝ ոչ ոք լացեալ,
Զայնք սաղմոսաց՝ ի քէն հատեալ,
և պաշտօնեայքըն՝ պակասեալ.
քաղցր եղանակքըն՝ խափանեալ,
ժամահարաց՝ երգ ոչ հընչեալ,
Պատարագունքն՝ ի քէն լըուեալ,
մարմն ւարիւն՝ տեսան ոչ բաշխեալ.
անուշ երգունքն՝ ալէլուից,
յոյժ նուազեալ՝ և ըսպասեալ,
Ո՛չ թէ լինէր՝ տէր զարթուցեալ,
իր այր հըզօր՝ զգինին թափեալ.
ըզթշնամին՝ քո յետս հարեալ,

և յաւիտեան՝ զքեզ հաստատեալ,
Խղբայրք, և զայս՝ պարտիմք քըննել,
թէ այս նոցա՝ էր պատահեալ,
զի սուրբք քեղէն՝ յոյժ նուազեալ,
Ճշմարտութիւնքըն նուաղեալ,
Եւ առաջնորդք՝ նոցա մոլեալ,
ի սրբութեանցըն՝ հեռացեալ,
Ժամ և աղօթք՝ ոչ արարեալ,
և մաքրութեամբ՝ ոչ կատարեալ,
Իշխանք նոցա՝ ուղիղ չգատեալ,
զորին և զայրին՝ վրշտացուցեալ,
և ժողովուրդն՝ առհասարակ,
իիստ անառակ՝ գործ ըստացեալ,
Վասն այն Աստուած՝ յոյժ բարկացեալ,
և ցաւագին՝ պատուհասեալ,
սաստիկ գանիւ՝ զնոսա հարեալ,
իրը ըզփոշի՝ զնոսա ցըրուեալ,
Զայս ամենայն՝ զոր յիշեցաք,
լինիմք մեղաց՝ մեք հեռացեալ,
սովորական՝ չարեաց զատեալ,
բարի գործոց՝ բուռն հարեալ,
Յեկեղեցիս՝ յուսով գիմեալ,
զաղօթս ըստէպ՝ մեք կատարեալ,
պահք սրբութեամբ՝ մեք ըստացեալ,
զողորմութիւն՝ ոչ խափանեալ,
Զյանցանս յատուկ՝ խոստովանեալ,
արտասուելով՝ ապաշխարեալ,
զնոսա տեսեալ՝ մեզ ողորմեալ,
որ չինիմք՝ նոցա նմանեալ,
Միթէ լինի՝ տէրն ողորմեալ,
և ի չարեաց՝ ըզմեզ պահեալ,
ի մեզ ինայեալ՝ և գըթացեալ,
ըզպատուհասն՝ յետ գարծուցեալ,
Աստէն անփորձ՝ զմեզ պահեալ,
չար բանսարկուէն՝ զմեզ ազտեալ,
յանօրինաց՝ չարեաց փրկեալ,
և ի նեղչաց՝ զմեզ զերծուցեալ,
Հոգեվարի՝ աւուրին օգնեալ,
հրեշտակ բարի՝ մեզ առաքեալ,
մարմնոյ արեան՝ տեառն հաղորդեալ,
օրհնեալ հողով՝ լիցուք թաղեալ,
Եւուր մեծի՝ գատաստանին,
զիւր սուրբ եկայք՝ ձայնըն լըսեալ,
յաջակողմեան՝ դասուն կարգեալ,
զտէրն յաւիտեան՝ օրհնարանեալ,
Ես Աբրահամ՝ մեղօք լըցեալ,
բաղում ցաւօք՝ զողլա յօրինեալ,
քանզի զկոստանդինուպօլիսն,
ի բարութեան՝ ժամն եմ տեսեալ,

Երեք ամիս՝ անդէն կացեալ,
և զսրութիւնն՝ ուխտ արարեալ.
զպատճուճանլն՝ Քրիստոսի,
բազում տնգամ՝ աչօք տեսեալ:
Զձեզ աղաշեմ՝ յոյժ աղերեալ,
որը հանգիպիք՝ զողըս ընթերցեալ.
թէ գլուխնէք՝ ի սմա սըխալ,
ներումն առնել՝ ոչ մեղադրեալ:



Ա.Ա.ՌԱԲՈՂԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԶԻՕՆՆԵԱՑ ԵՐԳԵՐԻՑ.

Վարանդա դատափի Ամետարանոց զիոնի
շրջակայքում:

Ալէլուեա Ալէլուեա.
Էսա եկէնք էս կըտօրս, ալէլուեա.
Սառալ ա տըրէիներս, ալ.
Էս կըտօրս չուրըք սըռէ չուրըք ոնէ, ալ.
Ծօծը գըլիւէն ծալած դումաշ, ալ.
Ծօխը քընեց հէն բիւրիւշեւմ, ալ.
Թուրունն ա կեարմուր եխծէ, ալ.
Պողերն ա վառված աստղեր, ալ.
Կուտանան ա թառ երշնէնէ, ալ.
Հացերն ա կեօրծած խաչեր, ալ.
Ծըհանն ա ոսկէ շիշակ, ալ.
Տէփն ա աւիտարան, ալ.
Ծըկոտէնն ա քաշկու մաններ, ալ.
Հացմօխն ա փօնջ մընէշակ.
Քրիստուոծ քինեց Դրախտինը, ալ.
Գւազանը խուրըցրուց, ալ.
Կընախամիւրը փլխըցրուց, ալ.
Ալաւեկը լըղըցրուց, ալ.
Լալավլ լալավ ձիւժկը հալավ, ալ.
Հեխն ձեռքէն սազմոսարան, ալ.
Աջի ձեռքէն աւիտարան, ալ.
Տննը շէն, տննը շէն.
Եր խուփէցըն անումը հի՞նչ ա.
Եր խօփէքը հըւտզու նման շըտանան.
Գետու նման ըրկընան.
Եր գիւշմանը քըրըքար ընկնէ.
Աչքը գըռակլաւ հանէ.
Ոնան փըռնէ գիւլ տանէ:
Ծառէն նման ձեղնը տան.
Քաշ կուպաւ ձեր գիւշմանէն աչքը տիւս օնէ.
Գիւլը ոնան փանէ քաշ անէ.
Ա տնատար փայլը բերէք ալէլուան տանէ.

Վարանդա գաւառի ծարտար զիոնի շրջա-
կայքում:

Ալէլուեա Ալէլուեա.
Էսա եկէնք էս կըտօրս, ալ.
Զիր ու չամէնչ էս ճօտերս, ալ.
Էս տօնս ա չուրըք սըռէ չուրըք սիւնի, ալ.
Չուրըքանուց ոննը սալին, ալ.
Հազար հազար, բարով հազար, ալ.
Զարը սրտէն չըրըկամէն, ալ.
Որդին ապրէ բարիկամէն, ալ.
Թուրունն ա կեարմուր եխծէ, ալ.
Հացերն ա կեօրծած խաչեր, ալ.
Կուտանան ա թառ երշնէն, ալ.
Հացմօխն ա փօնջ մընէշակ, ալ.
Ծըհանն ա ոսկէ շիշակ, ալ.
Ծոփը քինեց հում բիւրիւշիւմ, ալ.
Ծօծը երան ծալած դումաշ, ալ.
Պողերն ա վառված աստղեր, ալ.
Հըներակ քեզ ա Պէլի վանէս, ալ.
Որ գու Քրիստուոծ օրօրեցէր, ալ.
Քրիստուոծ քինից Դրախտինը, ալ.
Գւազանը խուրըցրուց, ալ.
Կընախամիւրը փլխըցրուց, ալ.
Ալաւեկը լըղըցրուց, ալ.
Լալավլ լալավ ձիւժկը հալավ, ալ.
Հեխն ձեռքէն սազմոսարան, ալ.
Աջի ձեռքէն աւիտարան, ալ.
Տննը շէն, տննը շէն.
Եր խուփէցըն անումը հի՞նչ ա.
Եր խօփէքը հըւտզու նման շըտանան.
Գետու նման ըրկընան.
Եր գիւշմանը քըրըքար ընկնէ.
Աչքը գըռակլաւ հանէ.
Ոնան փըռնէ գիւլ տանէ:
Վարանդում սոյն երգերը երգելիս այսպէս են
անում. երեք հոգի վեր են բարձրանում կտուրը
հերթին կանգնում, երկու հոգի պըրկո են ածում;
իսկ մինը ձրազը ճուարանով կախ է անում և եր-
գում, երգից յետոյ բաժին ստանում. ձու, եղ,
բրինձ, ալիւր, աղ, չիր և փող:

Խաչեն գաւառի Առաջածոր զիոնի շրջա-
կայքում:

Պարով պարով էս տաճարով ալէլուեա.
Էս տաճարով նուրաշինի, ալ.
Նուրաշինի չողք ընկիւնի, ալ.
Սալը սրտէն չարը կամէն, ալ.
Որդին ապրէ բարըկամէն, ալ.
Հրաս իկը մին ձիաւոր, ալ.